

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2019 թվականին իրականացված աշխատանքների մասին

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2019թ. տարեկան ծրագիրը պլանավորվել է ռիսկերի գնահատման հիման վրա և հանդիսանում է ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2019-2021թթ. ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասը:

2019թ. ներքին աուդիտի տարեկան ծրագիրը հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզպետի 28.12.2018թ. N 393-Ա որոշմամբ, որով 2019թ. իրականացվել է թվով 36 աուդիտ, որից 1-ը՝ մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներում, 3-ը՝ 100% պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում, 32-ը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններում:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2019թ-ին նախատեսված աշխատանքները իրականացվել են ամբողջ ծավալով:

Աուդիտի արդյունքներով թվով 2 տնօրենի նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն», իսկ թվով 2 տնօրենի նկատմամբ՝ «նկատողություն» կարգապահական տույժերը: